ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 23.04.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/80

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կետրոն ՓԲԸ
Մասնակից՝ «Մովսեսյան» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Մովսեսյան» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Մովսեսյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-21/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, համակարգչային սարքավորումների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 29.03.2021թ.-ի թիվ 26/26-1/4563-2021 գրությամբ «Մովսեսյան» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կետրոն ՓԲԸ-ի 19.03.2021թ. 01-14/233 գրության հիման վրա, 29.03.2021թ.-ին «Մովսեսյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 29.03.2021թ.-ին:

07.10.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/80 համարի ծածկագիրը:

15.10.2020թ.-ին և 23.04.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 15.10.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 23.04.2021թ.-ին:

2. «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կետրոն ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կետրոն ՓԲԸ-ն 19.03.2021թ. 01-14/233 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ, որ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի կարիքների համար համակարգչային սարքավորումների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-21/17» ծածկագրով գնման ընթացակարգ:

Գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «Մովսեսյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի տեխնիկական բնութագրում / Հավելված 1.1 / առկա են անհամապատասխանություններ: Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշման 41-րդ կետը. նիստը կասեցվել և վերոգրյալ մասնակցին առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել առկա անհամապատասխանությունները:

«Մովսեսյան» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի շտկել անհամապատասխանությունները:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-21/17» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Մովսեսյան» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

Պատվիրատուն թիվ 01-14/283 գրությամբ, ներկայացնելով գրավոր դիրքորոշում, հայտնել է հետևյալը.

««Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար համակարգչային սարքավորումների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՍԳԱ-ԳՀԱՊՁԲ-21/17» ծածկագրով գնանշման հարցման ձևով ընթացակարգի վերաբերյալ. Հայտերի բացումը տեղի է ունեցել 10.03.2021թ.. գնահատող հանձնաժողովի կողմից հայտերը գնահատվել են 11.03.2021թ. և նույն օրը հանձաժողովի քարտուղարը էլեկտրոնային եղանակով անհամապատասխանության վերաբերյալ ծանուցում է ուղարկել «Մովսեսյան» ՍՊԸ-ին: Մասնակցի կողմից պատվիրատուին է ներկայացվել առաջարկվող ապրանքների նոր տեխնիկական բնութագիր /Հավելված 1.1/, որը սակայն չի բավարարել շտկման պահանջը:

Ինչպես նաև պատվիրատուն հիմնավոր չի համարում «Մովսեսյան» ՍՊԸ-ի այն պնդումը, համաձայն որի պատվիրատուի կողմից ոչ իրավաչափ է եղել հայտերի բացման հաջորդ օրը անհամապատասխանության վերաբերյալ ծանուցում ուղարկել մասնակիցներին և պահանջել կատարել համապատասխան շտկումները, քանի որ ՀՀ Կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 32-րդ կետի 21-րդ ենթակետը սահմանում է հետևյալը.

Հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասն աշխատանքային օրվա ընթացքում: Եթե գնման ընթացակարգի չափաբաժինների քանակը գերազանցում է յոթանասունհինգ չափաբաժինը. ապա հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Ելնելով վերոգրյալից խնդրում ենք շարունակել «Մովսեսյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթացը:»:

Ներկայացված մեկ այլ՝ թիվ 01-14/291 գրությամբ, Պատվիրատուն հավելել է հետևյալը.

««Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար համակարգչային սարքավորումների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-21/17» ծածկագրով գնանշման հարցման ձևով ընթացակարգի վերաբերյալ.

Ի պատասխան 08.04.2021թ. Ձեր կողմից ստացված ծանուցման պատվիրատուն հայտնում է, որ «Մովսեսյան» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ստացել է առաջարկվող ապրանքների նոր տեխնիկական բնութագիր / Հավելված 1.1/, սակայն մասնակցի կողմից առաջարկված 10-րդ չափաբաժնի ապրանքի տեխնիկական բնութագիրը այդպես էլ չի շտկվել, մասնավորապես ապրանքի հզորությունը նշվել է առնվազն 65Wt, պտտման արագությունը առնվազն 2200rpm/min, ինչը չի հստակեցնում տվյալ ապրանքի ստույգ տեխնիկական չափանիշները:

Կից ներկայացնում ենք ընթացակարգի հրավերը և պատվիրատուի կողմից հրապարակված հրավերում պահանջվող ապրանքների տեխնիկական բնութագրերը:»:

3. <u>«Մովսեսյան» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 29.03.2021թ.-ին գրությամբ դիմել է «Մովսեսյան» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.03.2021թ.-ի թիվ 26/26-1/4563-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին՝ ներկայացել է հրավիրված նիստերին:

Մասնակիցը ներկայացրած թիվ 2021-C381 գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Մովսեսյան ՍՊԸ-ն հայտնում է, որ Սբ. Գրիգոր Լուսավորիչ ԲԿ ՓԲԸ կողմից ներկայացված այն պնդումը, որ Մովսեսյան ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի շտկել

անհամապատասխանությունը չի համապատասխանում իրականությանը հետևյալ երկու հիմնավորումներից ելնելով.

1. ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-21/17 ծածկագրով գնանշման հարցման հրավերի բացումը տեղի է ունեցել 10.03.2021թ-ին ժամը 11:00-ին, իսկ շտկման պահանջը ստացվել է հաջորդ օրը 11.03.2021 թ.-ին, ժամը 16:23-ին, այնինչ ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշման 41-րդ կետով սահմանված է որ՝

Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ ... ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:.., հետևաբար՝ գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի բացման նիստի հաջորդ օրը մասնակցին անհամապատասխանությունների վերաբերյալ ծանուցում ուղարկելը և շտկում կատարել պահանջելը ոչ իրավաչափ գործողություն է, քանի որ չի համապատասխանում ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշման պահանջներին և ոչ էլ հրավերի պահանջներին: Ասվածից պարզ է դառնում, որ տվյալ իրավիճակում Մովսեսյան ՍՊԸ-ն չեր կարող չշտկել արձանագրված անհամապատասխանությունները, քանի որ դրանք չեն արձանագրվել հայտերի բացման նիստի օրը:

2. 11.03.2021թ.-ին, ժամը 16:23-ին, հայտերի բացման հաջորդ օրը անհամապատասխանության վերաբերյալ ծանուցում և շտկման պահանջ ստանալով, Մովսեսյան ՍՊԸ-ն անախորժություններից խուսափելու նպատակով կատարել է հանձնաժողովի ոչ իրավաչափ պահանջը, նույն օրը 11.03.2021թ.-ին, ժամը 17:02-ին, հանձնաժողովի գնահատող քարտուղարի հրավերով նախատեսված yeranuhi.sargsyan@sglmc.am էփ հասցեին է ուղարկել պահանջված փաստաթուղթը հավելված 1.1-ը, պահանջված շտկումներով:

Վերոգրյալից պարզ է դառնում, որ պատվիրատուն ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացրել իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն, իսկ ՄՈՎՍԵՍՅԱՆ ՍՊԸ-ն չի խախտել գնումների գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորություն, հետևաբար ՍՅ-ԼՕ-2021/80 ընթացակարգը ենթակա է մերժման:»:

Ելնելով վերոգրյալից՝ Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է ՍՑ-ԼՕ-2021/80 ընթացակարգը մերժել:

Ներկայացված թիվ 2021-C410 գրությամբ՝ Մասնակիցը հայտնել է հետևյալը.

«Ուսումնասիրելով 08.04.2021 թ.-ին ԷՓ միջոցով ստացված «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

Պատվիրատուն պնդում է, որ Մովսեսյան ՍՊԸ-ի կողմից տրված շտկումը չի բավարարել շտկման պահանջը, այնինչ համադրելով 11.03.2021 թ.-ին ստացված շտկման պահանջը և նույն օրը պատվիրատուին ուղարկված շտկումը, ակնհայտ է դառնում, որ ներկայացված փաստաթղթով շտկվել են այդ պահանջի առանց բացառության ներկայացված բոլոր պահանջները, և հետևաբար, այն պնդումը, որ շտկումը չի բավարարել շտկման պահանջը, ակնհայտ անհիմն է:

Ինչ վերաբերվում է Պատվիրատուի այն պնդմանը, որ հայտերի գնահատումը պետք է իրականացվի 10 աշխատանքային օրվա ընթացքում, ապա տվյալ իրողությունը չի հակասում ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշման 41-րդ կետով սահմանված նորմին ըստ որի՝

Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ ... ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:...:

Պատվիրատուն ըստ երևույթին, հայտերի գնահատման բազմաբովանդակ գործընթացը նույնականացում է բացառապես հրավերի պահանջներին չհամապատասխանող անհամապատասխանությունների հայտաբերման հետ, ինչը Պատասխանողի կողմից մեջբերված նորմի սխալ մեկնաբանման արդյունք է:

Ասվածը հիմնավորվում է հետևյալ վերլուծությամբ.

Եթե ներկայացված հայտերում հրավերի պահանջներին անհամապատասխանություն հայտնաբերելու և դրանք շտկելու վերաբերյալ նորմը մեկնաբանվի այնպես, որ այն կիրառելի լինի հայտերի ընդունման վերջնաժամկետից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում, ապա կստացվի, որ հանձնաժողովը հայտերի բացման օրվանից հետո 10-րդ աշխատանքային օրը կարող է մասնակցին ներկայացնել անհամապատասխանության շտկման պահանջ, մեկ աշխատանքային օրով կասեցնելով

նիստը, իսկ մասնակիցը պահանջը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում հայտերի գնահատման 11-րդ կամ 12-րդ աշխատանքային օրը, կարող է ներկայացնել շտկումը, ինչը խախտում է հայտերի գնահատման 10 աշխատանքային օրվա սահմանափակման պահանջը, ինչից և հետևում է, որ քննարկվող նորմի նմանատիպ մեկնաբանությունը հակասում է նույն իրավական ակտի պահանջներին, իմաստին և նպատակին, և հետևաբար նման մեկնաբանությունը սխալ է:»:

Մասնակիցը թիվ 2021-C417 գրությամբ հավելել է հետևյալը.

«Ուսումնասիրելով 14.04.2021թ.-ին ԷՓ միջոցով ստացված «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կետրոն ՓԲԸ-ի 01-14/291 գրություն-դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

Օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ, հայտերի բացման և գնահատման նիստից հետո հաջորդ որը 11.03.2021 թ.-ին ժամը 16:23-ին ստացվել է Պատվիրատուի գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացված շտկման պահանջը, որում ի թիվս այլ պահանջների ներկայացված է եղել տառացի հետևյալ անհամապատասխանությունը .

10, 13-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերը կրկնորինակվել են պատվիրատուի կողմից հրապարակված հրավերի տեխնիկական բնութագրերից:

Ծանոթանալով նշված պահանջին և համադրելով այն ՀՀ կառավարության 526-Ն որոշման 41-րդ կետի վերջին նախադասության հետ, ըստ որի Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները, Մովսեսյան ՍՊԸ-ն նույն օրը 11.03.2021 թ-ին, ծանուցումը ստանալուց հետո 39 րոպե անց, ժամը 17:02-ին, հանձնաժողովի գնահատող փարտուղարի հրավերով մատնանշված yeranuhi.sargsyan@sglmc.am ԷՓ հասցեին է ուղարկել այն շտկումը, որը պահանջվել է կատարել, այն է 10, 13-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերը չկրկնորինակել պատվիրատուի կողմից հրապարակված հրավերի տեխնիկական բնութագրերից, կատարելով որոշակի փոփոխություններ տեխնիկական բնութագրի տեքստում, որպեսզի այն չդիտարկվի որպես կրկնորինակված:

Վերոգրյալի հաշվառմամբ. Ձեր ուշադրությունն եմ հրավիրում այն իրողության վրա, որ շտկման պահանջում չկա որևէ նշում այն մասին, որ անհրաժեշտ է 10-րդ չափաբաժնից հանել առնվազն բառերը կամ ավելացնել այլ բառեր, կամ մեկ թվով նշել պտտման արագությունը կամ հզորությունը, և հետևաբար, Պատվիրատուի այն պնդումը, որ Մովսեսյան ՍՊԸ կողմից չի կատարվել պահանջվող շտկումը, օբյեկտիվորեն չի համապատասխանում իրականությանը:

Եթե պատվիրատուն, անհրաժեշտ էր համարում, որ մասնակցի կողմից հստակ նշվեր պտտման արագությունը, և հզորությունը, ապա, Պատվիրատուն ղեկավարվելով ՀՀ կառավարության 526-Ն որոշման 41-րդ կետի պահանջով, պարտավոր էր Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրել հայտնաբերված անհամապատասխանությունները, ինչը, դատելով պատվիրատուի արտահայտած վերջին դիրքորոշումից չի արվել:

Միաժամանակ անհրաժեշտ եմ համարում նշել, որ նշված ապրանքը չի կարող ունենալ չփոփոխվող պտտման արագություն և էներգիայի ծախսի կայուն և անփոփոխ նոմինալ հզորություն, քանի որ պտտման արագությունը տատանվում է սկսած 2200 պտույտ/րոպեից մինչև 3200 պտույտ/րոպե, կախված պրոցեսորի տաքացումից, ըստ այդմ փոփոխվում է նաև հզորությունը 2200 պտույտի դեպքում այն կազմում է 65 վտ, իսկ 3200 պտույտի դեպքում 75 վտ: Հետևաբար, առաջարկվող ապրանքի համարժեքությունը գնահատելու նպատակով պատվիրատուի կողմից պտտման արագությունև կամ հզորությունը մեկ թվով նշելու պահանջը հիմնավոր չէ, քանի որ նման պահանջով չի կարող գնահատվել նշված ապրանքի բնութագիրը, և հետևաբար, Մովսեսյան ՍՊԸ-ի կողմից ներկայացված առնվազն 2200 պտույտ/րոպե, և առնվազն 65 վտ տեխնիկական բնութագիրը լիովին համապատասխանում է հրավերի պահանջներին և այնքանով է նկարագրում ապրանքի տեխնիկական բնութագիրը, որքանով այն պահանջվել է հրավերով, և որքանով որ անհրաժեշտ է դրա համարժեքությունը գնահատելու համար:»:

4. <u>ՍՑ-LO-2021/80 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կետրոն ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից համակարգչային սարքավորումների ձեռքբերման նպատակով 03.03.2021թ.-ին հայտարարվել է «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-21/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Մովսեսյան» ՍՊԸ-ն:

iii. «Մովսեսյան» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-21/17» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 11.03.2021թ.-ին կայացված նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Մովսեսյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի՝

- 3-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում /Հավելված 1.1/ սկավառակի պտտման արագությունը առաջարկվել է 5400 rpm, հրավերով պահանջվել էր 7200rpm:
- 4-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում / Հավելված 1.1 / առաջարկվել է 23AWG, հրավերով պահանջվել է 22 AWG:
- 10 և 13-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերը կրկնօրինակվել են պատվիատուրի կողմից հրապարակված հրավերի տեխնիկական բնութագրերից:

v. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջները, որոշել է կասեցնել նիստը և ծանուցել Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vi. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը yeranuhi.sargsyan@sglmc.am էլ. հասցեից 11.03.2021թ.-ին Մասնակցի computerland@mail.ru էլ. հասցեին է ուղարկել Հանձնաժողովի 11.03.2021թ.-ին կայացված նիստի թիվ 2 արձանագրությունը:

vii. Մասնակիցը նույն օրը computerland@mail.ru էլ. հասցեից 11.03.2021թ.-ին ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի yeranuhi.sargsyan@sglmc.am էլ. հասցեին է ուղարկել շտկված հավելված 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

viii. Հանձնաժողովի 18.03.2021թ.-ին կայացված նիստի թիվ 3 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-21/17» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցներ՝ «Պռո Ինվեստ» ՍՊԸ-ի, «ՔՈՄՓ ՊՐՈ» ՍՊԸ-ի, «Մովսեսյան» ՍՊԸ-ի, «էյչ Գրուպ» ՍՊԸ-ի, «Տեխնոֆորում» ՍՊԸ-ի և «Վահագն Մելիք-Մարտիրոսյան» Ա/Ձ-ի կողմից

ներկայացված հայտերի տեխնիկական բնութագրերում /Հավելված 1.1/ առկա էին անհամապատասխանությունները: Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշման 41-րդ կետը նիստը՝ Հանձնաժողովը որոշել էր կասեցնել նիստը և նշված մասնակիցներին առաջարկել էր մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել առկա անհամապատասխանությունները: Մասնակիցները շտկել են առկա անհամապատասխանությունները սահմանված ժամկետում, բացի «Մովսեսյան» ՍՊԸ-ից:

ix. Նույն արձնագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետի պահանջները, որոշել է «Մովսեսյան» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.03.2021թ.-ի թիվ 26/26-1/4563-2021 գրությամբ «Մովսեսյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին

համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (30.07.2020թ.-ի թիվ 1275-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կետրոն ՓԲԸ-ի կողմից Համակարգչային սարքավորումների ձեռքբերման նպատակով 03.03.2021թ.-ին հայտարարված «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-21/17» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն

էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային

եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կետրոն ՓԲԸ-ի կողմից համակարգչային սարքավորումների ձեռքբերման նպատակով 03.03.2021թ.-ին հայտարարված «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-21/17» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ «Մովսեսյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի 3-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում /Հավելված 1.1/ սկավառակի պտտման արագությունը առաջարկվել է 5400 rpm, հրավերով պահանջվել էր 7200rpm: 4-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում / Հավելված 1.1 / առաջարկվել է 23AWG. հրավերով պահանջվել է 22 AWG: 10 և 13-րդ չափաբաժիննիրի տեխնիկական բնութագրերը կրկնօրինակվել են պատվիատուրի կողմից հրապարակված հրավերի տեխնիկական բնութագրերից: Հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետի պահանջները, որոշել է կասեցնել նիստը և ծանուցել Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Մասնակիցը 11.03.2021թ.-ին computerland@mail.ru էլ. հասցեից 11.03.2021թ.-ին ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի yeranuhi.sargsyan@sglmc.am էլ. հասցեին է ուղարկել շտկված հավելված 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

Հանձնաժողովը 18.03.2021թ.-ին կայացված նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրել է, որ «Մովսեսյան» ՍՊԸ-ն չի շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչով պայմանավորված Հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետի պահանջները, որոշել է «Մովսեսյան» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման, դրանք համադրելով Մասնակցի ներկայացրած դիրքորոշման հանգամանքներին՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Կարգի 41-րդ կետն ուղղակիորեն սահմանում է և այդ կետի իմաստից բխում է, որ հայտում ներառվող փաստաթղթերում արձանագրված՝ շտկման ենթակա անհամապատասխանություններն ենթակա են շտկման՝ հանձնաժողովի քարտուղարի կողմից Մասնակցին էլեկտրոնային եղանակով ուղարկված ծանուցման ստացման պահից հաշված մեկ աշխատանքային օրյա ժամկետում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելվել նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ

հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը(ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Միլլար» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

Օրենսդիրը, արձանագրված անհամապատասխանությունների շտկում ներկայացնելու պարտականության կատարման համար սահմանելով այդպիսի պահանջ ստանալու պահից հաշված 1 աշխատանքային օրյա ժամկետ, գնման գործընթացի մասնակիցներին ընձեռել է այն օբյեկտիվ ժամանակահատվածը, երբ վերջիններս կարող են իրացնել Օրենքով և Կարգով սահմանված՝ արձանագրված անհամապատասխանությունների շտկելու պարտավորությունը: Ուստի սահմանված պատասխանատվության միջոցները կարող են ի հայտ գալ միայն սահմանված ժամկետի ավարտմամբ կամ մասնակցի կողմից այնպիսի գործողություններ կատարելու արդյունքում, որոնք վկայում են վերջինիս կողմից արձանագրված անհամապատասխանությունները շտկելուց հրաժարվելու մասին:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Կարգի 41-րդ և Հրավերի 8.9-րդ կետերի դրույթները իմպերատիվ (պարտադիր) կերպով սահմանում են հանձնաժողովի քարտուղարի գործողությունները, որոնք պետք է իրականացվեն մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների դեպքում, այն է՝ հանձնաժողովի

քարտուղարը նույն օրը անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, ինչպես նաև մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Միաժամանակ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ ծանուցման էությունը կայանում է և ուղղված է Մասնակցին որոշակի հանգամանքների վերաբերյալ իրազեկելուն, տեղեկատվություն տրամադրելուն և բովանդակության ամբողջությանը հասու դարձնելուն:

Բողոքներ քննող անձն ամփոփելով վերոգրյալ դիրքորոշումը, եզրահանգում է նաև, որ թեև գործադիրը հստակ չի սահմանում, թե ծանուցումն ինչպիսի՞ բովանդակություն պետք է պարունակի, սակայն միանշանակ է այն, որ ծանուցումը պետք է լինի այնպիսին, որ հնարավորություն կտա իրապես պարզելու դրանում պարունակվող հանգամանքը (ները), և մասնակցի կողմից ծանուցման հետ ծանոթանալու իրական հնարավորություն ստեղծվի: Այսինքն՝ մասնակիցների համար ծանուցումն իրական հնարավորություն պետք է ապահովի տիրապետելու դրա բովանդակությանը: Ընդ որում, հարկ է նկատել, որ շտկման մասին ծանուցումը պետք է պարունակի նաև տվյալներ շտկման ենթակա փաստաթղթերի ներկայացման ձևի և կարգի վերաբերյալ (կոնտակտային տվյալներ, էլեկտրոնային փոստի հասցե, որին պետք է մասնակիցն ուղարկի շտկված փաստաթղթերը և այլն): Ինչպես նաև այլ անհրաժեշտ տեղեկություններ, որոնք հնարավորություն կընձեռեն ծանուցումը (արձանագրությունը) ստացած մասնակցին, ծանուցմամբ նշված բովանդակությանը ծանոթանալուց հետո, շտկել անհամապատասխանությունները և ներկայացնել այն ձևով, ինչպես նշված է ծանուցմամբ կամ ներկայացված արձանագրությամբ:

Վերոնշյալ պարտադիր վավերապայմանների միաժամանակյա առկայության դեպքում է հնարավոր միայն փաստել՝ ծանուցման նպատակի լիարժեք իրականացման հանգամանքի մասին:

Սույն դեպքում, Մասնակցին ուղարկված շտկման մասին ծանուցմամբ, Հանձնաժողովի քարտուղարը կցել է ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.03.2021թ.-ին կայացված նիստի թիվ 2 արձանագրության արտատպված տարբերակը, որում, Ընթացակարգի 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով, հստակ և մանրամասն նշված են արձանագրված անհամապատասխանությունները և դրանք շտկելու ժամկետը, իսկ 10-րդ և 13-րդ չափաբաժինների մասով արձանագրված անհամապատասխանությունները

վերացական են ու չեն ելնում Օրենքի 34-րդ հոդվածի և Կարգի 41-րդ կետի դրույթների պահանջներից:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Օրենքի 34-րդ հոդվածի և Կարգի 41-րդ կետի դրույթների իմաստից բխում է, որ մասնակցի ներկայացրած հայտը գնահատվում է բավարար այն դեպքում, երբ այն համապատասխանում է հրավերով նախատեսված պայմաններին:

Հարկ է նկատել նաև, որ Կարգի 41-րդ և Հրավերի 8.9-րդ կետերի դրույթների վրա հասնելու (կիրառելու) հանգամանքը գործադիրը պայմանավորել է հրավերի պահանջների նկատմամբ մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների հանգամանքով: Այլ կերպ ասած՝ նախ անհրաժեշտ է արձանագրել անհամապատասխանություն, ապա դրանից հետո նոր առաջարկել կատարելու շտկում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Պատվիրատուն և Հանձնաժողովը գնման գործընթացի մասնակիցների հայտերի գնահատումն իրականացնելիս չպետք է վերջիններին ծանրաբեռնեն այնպիսի պարտականություններով, որոնք ուղղված են ձևական պահանջների պահպանմանը, կամ, առավել ևս, մերժեն ներկայացված հայտերը, եթե մասնակիցների վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են:

Ինչպես Օրենքի իմաստից է բխում, որ գնման գործընթացի շրջանակներում ներկայացված հայտերի գնահատումը պետք է ուղղված լինի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին, և դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր:

Սույն դեպքում, Հանձնաժողովը, Ընթացակարգի 10-րդ և 13-րդ չափաբաժինների մասով, արձանագրելով անհամապատասխանություն, Մասնակցի վրա դրել է ոչ իրավաչափ պարտականություն, այն է՝ առաջարկել է շտկել այնպիսի անհամապատասխանություն, որն առկա չէր, որպիսի պայմաններում Հանձնաժողովի կողմից «Մովսեսյան» ՍՊԸ-ի մասով կայացված Ընթացակարգի 10-րդ և 13-րդ չափաբաժինների մասով շտկում առաջարկելու մասին որոշումը ոչ իրավաչափ է:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների

խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Վերոնշյալներով իրավական և փաստական հանգամանքների հաշվառմամբ, Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրահանգման, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունն առաջանում է այն ժամանակ, երբ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտում է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը: Սույն գործում առկա փաստերով չի հիմնավորվում, որ Մասնակցի կողմից խախտվել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորություն, որն էլ կհանգեցներ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված դրույթների կիրառմանը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել «Մովսեսյան» ՍՊԸ-ին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.03.2021թ.-ի թիվ 26/26-1/4563-2021 գրությամբ «Մովսեսյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2021/80 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**